


№ 8 ՓՈՔՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 8

Գ. ՄԵՍՅԱՆ

# ՄԱՅՐԻԿԻՑ

3727

# ՎՐԵԺ



ԹԻՖԼԻՍ—1929

3.31.335  
15-64

Պրովետարիա բոլոր յերկրների, միացե՛ք!

ՓՈՔՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 8

Գ. ՄԵՍՅԱՆ

# ՄԱՅՐԻԿԻՑ ՎՐԵԺ

ՊԱՏԿԵՐԸ ԶԱՐՔ

2004



ԲՐԱՅՆԻ - 1929

ՄԱՅՐԻԿԻՑ ՎՐԵԺ

Արմիկը նոր եր վոտն յեղել ու մոր  
փեշը բաց չեր թողնում։ Մի որ մայրը  
շտապ գործով տանից դուրս գալիս՝ Արմի-  
կին խարեց մի աման մածնով։

Յերեխան մածնով յեղած՝ չնկատեց, թե  
վոնց մայրը դուրս յեկավ տանից, զնաց։

Քիչ վոր կացավ, տան լոռությունը  
սթափեցրեց Արմիկին։ Նա յետ նայեց,  
հետո աջ, ձախ, չորս կողմը—մնաց գամա-  
ցած—«վահ, ուր ե մայրիկը»։

Մայրիկը չկար։ «Պոռշ արավ», թե լաց  
լինի, բայց բերանի պատառը և առաջի  
մածնի ամանը լոեցրին նրան։ Հետո՝ ինքն  
երան ասաց կամաց.



— Գնամ կանչեմ...

Մոտեցավ տախտի պոնդին, փորի վրա սահեց, իջավ, մի կտոր հաց վերցրեց ու դիմեց դեպի դուռը:

Զարչարվեց, մի կերպ բացեց դուռը, կանգնեց գլխաբաց, բորիկ, տան շեմքի վրա և գողտիկ, թլիկ լեզվով սկսեց կանչել.

— Տուլի՛, տուլի՛, տուլի՛...

Սրահի ամբարի տակից դուրս պրծավ հանկարծ Արմիկի խաղընկեր բոթոթը. հավերը վախեցած՝ կրկոչալով թրպտացին, փախան աջ ու ձախ: Քոթոթը կանգնեց մի բողե, ձգվեց, իր կարմիր բարակ լեզուն անցրեց շրթունքներովն ու իրեն թափ տը- վավ:

Դեռ չեր վորոշել, թե վօրտեղից են կանչում իրան:

— Տուլի՛, տուլի՛..., նորից լսվեց Արմիկի ձայնը: Քոթոթը, ուրախ-ուրախ վա- զեց դեպի Արմիկը և սկսեց պոչը խաղա- ցնել: Արմիկը ձեռքի պատառը նըա առաջը նետեց, հետ գարծավ տուն, անդադար իր փոքրիկ ցուցամատն ու բութը իրար քսե-

լով—իբր թե պատառախար և տալիս, ու հրավիրեց նրան ել իր յետեկից.

— Տնւլի, տնւլի...

Տուլին Արմիկի հետ մոտեցավ տախ- տին: Արմիկը գրկեց նրան և տնքալով վեր հանեց տախտը: Ինքն ել բարձրացավ մի



կերպ նրա յետեկից: Առաջ քաշեց մածնի ամանը, ամուռ գրկեց ձախ կոնով տուլիին ու գլան առավ.

— Դե, արի ուտենք:

Ցեվ սկսեցին ուտել գդալփոխ. Ար- միկը հերթով մեկ իր բերանն եր տանում


զգալը, մեկ՝ տուլիի. բայց տուլին մեկ-մեկ  
ել հերթից գուրս եր վերցնում, առանց զը-  
դալի։ Այդ ժամանակ Արմիկի մածնաթա-  
թախ զգալը իջնում եր տուլիի ճակատին.  
«Ա՛ տուլի, զգալով տեր ե... պատառ-պա-  
տառ տեր ե...»։

Բայց տուլին չեր լսում Արմիկին. քա-  
նի կենում, ենքան շատ եր ուտում հեր-  
թից գուրս ու, ենքան ել շուտ-շուտ եր  
իջնում զգալը նրա դնչին, ճակատին, քը-  
թին... մինչև վոր իրար նման դառան.  
տուլիի դունչն ել սպիտակեց Արմիկինի  
պես։

Հավերը ներս ելին թափվել, փովել  
անովը մին ու ամեն ինչ տեղահան արել.  
ամեն մեկը մի բան եր վորոնում—վորը  
տախտի տակին, վորը պուճախներում,  
վորը՝ թարեքին։ Ամանները թափթփեցին  
իրար յետեից թարեքին ել աման չեր մը-  
նացել։

Շեմքին յերեաց մայրիկը։ Տան ան-  
կարգությունը զարմացրեց նրան, բայց

յերբ Արմիկի կողմը նայեց՝ մնաց ապշած։  
— Վո՞ւ, յես քուանամ։



Արմիկը մեջքով դեպի մայրը հանգիստ  
նստած՝ ինչ վոր խոսում եր տուլիի հետ.  
իսկ տուլին՝ մածնի ամանը և իր դունչը  
մաքրելուց հետո՝ հանգիստ լիզում եր Ար-  
միկի թշերը։

## ԳԼՈՒԽՍ ԼՎԱՑԱՆ

Մահիս ձենը լսեցի լավ եր, բան թե  
զլուխս լվանալու. Չեյի սիրում: Ե՞ն ե վորս-  
կան եյի դառել, աչքով պահում. սկը տա-  
րավ, թե կրակը ջրի պղինձ բարձրանար—  
վայրենի եյի դառնում, կորչում են տա-  
նիցը: Բեյց դե, ինձանից պակաս վորսկան-  
ներն ել մերոնք չեյին: Ինչքան միտս եյի  
պահում, ինչքան հսկում եյի՝ դարձյալ  
թակարդ եյի ընկնում:

Մեկ ել տեսար մայրս կամ հայրս  
իրար յերեսի նայեցին ու բարկացան Շո-  
ղվիկի վրա.

— «Աղջի, շնոր արա, կրակ արա, խը-  
մորի ջուրը ուշացավ, զութանի համար

պտի հաց թխվի, հնձվորը սոված է, իրի-  
կունը մշակը տուն պտի գա»:

Ու՞մ մաքովն եր անցնում, թե, վոչ  
ձմեռը զութան կվարի, վոչ ել աշունքն ու  
գարունքը արտ հնձվի: Մին ել են եյի տես-  
նում, վոր ամեն ինչ փոխվեց ու պտավեց  
իմ զիսիս:

Եղ որն ել չիմացա վոնց յեղավ. դա-  
նակը ձեռքիս, ինձ համար տաշ եյի անում,  
վոր մայրս ուսիցս բոնեց ու փափախս  
զիսիցս պոկեց:

— Վանայ, վանայ...

— Քե մատաղ ըլեմ, չամո ջան, քե...  
ի՞նչ քե մատաղ, ի՞նչ քե սաղաղ, վոնց  
վոր կայծակ ճայթի զիսիս, բոլորը պարզ-  
վեց ինձ համար. Ծվացի, ճշացի, ձգձեցի,  
բայց բոլորն անոգուտ. մորս մատների  
տակ իրար յետեմից քանդվում եյին վզիս  
կոճակները:

— Զեմ ուզում, վա՛այ, չեմ ուզում...

— Լաց մի ըլի, չանիդ մատաղ, լաց  
մի ըլի, բա թողեմ, վոր են անտերները  
թոկ շինեն, գիշերը գան քեզ քաշ տան  
շուրը գցեն...

— Թող ինձ զցեցն, չեմ ուզում, թող  
ինձ զցեցն:

— Քու խոսքովնամ, վոր չես ուզում, —  
լսկեց Շողիկի ձենը, --աչքդ հո չեն հանում,  
քանի զըռզըռաս:

Յես ավելի կատաղեցի. վատքս նետեցի՝  
չհասավ նրան, լացս ավելի թնդեց:

— Աղջի, գու ձենդ կտրի, ինչ վոր քեզ  
ասում են, դու են արա, — վրա պրծավ  
մայրս. ու նա ծանը ու բարակի իր մաս-  
տակը ծամելով վնաց բերավ նախ տաշ-  
տակը, հետո ել սանրն ու սապոնը ու  
դիտմամբ գրավ աչքիս առաջին: Վոր ա-  
զատ լինեցի, յես գիտեցի թե ինչ կստանար  
Շողիկը, բայց նա լավ գիտեր, վոր յես կաշ-  
կանդված եմ:

Քիչ հետո պղինձն ել յեկավ տաշտակի  
մոտ: Գոլորշին քուլա-քուլա բարձրանում  
եր նրա բերանից: Լացս ավելի աղիողորմ  
դարձավ. ասես թե՝ խարույկիս ծուխն եր  
բարձրանում, վորի վրա պիտի այրեցին  
ինձ:

Ամենից սարսափելին սապոնն եր:

— Մայրիկ, վարչը բերեմ, — ելի լսկեց  
Շողիկի ձայնը, թեև վարչն արդեն նրա  
ձեռքին եր:



— Աղջի, գու կորի եղտեղից, ա՛խ, թե  
մին կպըծնենմ...

— Աղջի, բարկացնիլ մի յերեխուս. լաց  
մի ըլի, արկիդ մատաղ, ես ե պրծնենք,  
մին տես քեզ ինչեր պտեմ տալ. թող են  
վախտը Շողիկը հենց մտիկ տա ու աչքերը  
վեր անի:

Հասավ ըոսկեն:

— Դե կոաց, քեզ մատաղ:

Յես չեմ կոանում, դարձել եմ չոր  
փետ։ Մայրս վզիս ե հարում, վոր ծոփ,  
յես գլուխս վեր եմ ցցում։

Ես կոիվը բավական շարունակվեց։ Շա-  
րունակվեց ենքան, վոր յես մորս ձեռքը  
կծեցի, թե դուրս պրծնեմ, նա ել բարկա-  
ցավ ու գլխիս խփեց։

Աղջի, ածա, գե վոր չի կոանում,  
ածա տեսնենք ով կփոշմանի։

Շողիկն ել դրա համար եր պատրաստ  
կանգնել։ Ում մտքովը կանցներ։ Կանգնած  
տեղս փարչը վոր գլխիս թեքվեց, ջրի թե-  
լերը մեջքովս հասան կրընկներիս։ Զենս  
ավելի բարձրացավ, բայց ես անզամ ար-  
դեն կոացա։ Փարչը փարչի յետելից եր գա-  
լիս, շունչս քիչ եր մնում, թե տակին կարի։  
ասում եյի հրես կխեղդվեմ, բայց շարժ-  
վել չեյի կարում, մորս ծնկների մեջ մնա-  
ցել եյի մեխված, վոնց վոր սեղմիչների մեջ։

Գոռում եմ «տաք ե», վերեից ասում  
են՝ «տաք չի»։

Ասում եմ՝ «սապոն չեմ ուզում», չի

լսում—տրորում ե գլուխս սապնի չոր կոռ-  
ճի տակ։

— Վա՛ա՛յ, նանի ջան, աչքերս…

— Աչքերդ չքոռացան, հախդ ե, ինչի՞  
չես թողնում կարգին լվանամ։ ուրիշներն  
ել յերեխեք ունեն, թե մենակ դու յես։  
Կրակ ես դառել ինձ համար։

Եսպես կովով, աղմուկով լվանալու  
կեսը անց եր կացել, վորքան հիշում եմ,  
լացս ել բարակել, վոր մայրս Շողիկին  
շշուկով ուրիշ տեղ դրկեց։

— Ես ե, վոր պրծնեմ, յերեխուս հա-  
մար բլիթ պտեմ թխի։ իրիկունն ել մեծ  
պղնձովը քաշովի պտեմ եփի։ Շամամ հո-  
քիրը մեղր ե բերել, իրան պտեմ տա, ուտի։

Եսպես նա շարունակում եր, յես ել  
համ հավատում եյի, համ ել կասկածում։  
Ես միջոցումը, նա մին ել սապոնը վեր  
կալավ։

— Վախիլ մի արևիդ մատաղ,—ասաց,—  
մենակ գլխիդ եմ քսում մի պատառ, երե-  
սիդ չեմ քսելու։ Յես գիտեյի, վոր սուտ ե  
.....մ, վորովհետեւ միշտ ել եղպես եր տ-

սում, բայց առաջ զլուխս եր քսում, հետո  
ել յերեսս:

Ժընգմինգացի, լաց եղա նորից, վոտ-  
ներս տափը թակեցի, բայց բան չոգնեց,  
նա աղաչում եր ինձ:



Վոնց յեղավ, մին ել նա սապնոը թո-  
ղեց զլիսիս՝ թե ժաժ չգաս, եսպես կաց,  
սառը ջուր բերեմ խառնուրդ անեմ:

Վոնց վոր թե մտքումս մի արև բացվի.

Մայրս հենց մեջքը դեպի ինձ արավ թե չե՞  
աչքդ բարին տեսնի. տաշտակի զլխովը լոք  
տվի, սապնի կռոճը զլիսիցս թուավ մի կողմ  
ու յես զլուխս փրփրած արդեն դռանն եյի:

— Վույ, յես քեզ թաղեմ, վհւյ յես քեզ  
տափումը...—լսեցի յետեիցս, բավական  
հեռու:

— Աղջի բոնի հա՛. ա տղա բռնեցեք  
հա, Սարգիս, Սարգիս...

Կալը վոր անց կացա՝ պատահեցի Շո-  
ղիկին, մի գինու բաժակ կիսատ ձեռքին՝  
քացախ եր տանում զլիսի համար. նա վա-  
խեց թե քացախը Աեր ածիյ յես թուա:

Քամակիցս թմթմ փոցը շատացավ. ա-  
նեծք ե, վոր թափկում ե, աղաչանք ու  
սպառնալիք ե, վոր զալիս ե, բայց գիտեմ,  
վոր մայրս ու Շողիկը ինձ հասնողը չեն:  
Գյուղի կեսն եյինք հասել, վոր մի ուրիշ  
վոտնաձայն ել հասավ մեզ: Մեր ծառա  
Սարգիսն եր. նա գոմումն եր յեղել, վոր  
լսել եր մորս ձենը: Ել շատ շտեեց մեր  
վազելը դրանից հետո: Սարգիսը առաջս ըն-  
կավ ու ինձ բռնեց: Մայրս ել կանգնեց.

3227

Նրա չուստի մի հատը Շողիկը յետևից բերավ հասցրեց ու Սարգիսն ել կուռս բռնած ինձ բերավ հանձնեց մորս։ Նրա ջրաժամական ձեռները մի քանի անգամ բարձրացան ինձ վրա, բայց վոչ մի անգամ ել չըղիպան. ամեն իջնելիս զգում եյի, վոր նա ինայում ե։

Բերին տուն ու շարունակեցին. լվացան ել, սապնեցին ել։ Ել յես առաջվա պես չեյի բողոքում, լեզուս կարճ եր, մենակ ԺԱՆԳԺԱՆԳՈՒՄ եյի ինձ ու ինձ։



0002881

2013



8-1054  
ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

ԼՈՒՑՍ ԵՆ ՏԵՍՎԵԼ ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԾԻ ՀԵՏԵՎՃԵԼ  
ՄԸՆԿԵԿԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ

«Փոմրիկ գրադարան»

№ 1. Բաղալը (սակավաթիվ)	25 կոպ.
№ 2. Խըճիթում » »	15 կոպ.
№ 3. Վանիկը » »	15 կոպ.
№ 4. Մայրը . . . . .	15 կոպ.
№ 5. Ճիթ-Ճիթը . . . . .	15 կոպ.
№ 6. Վազրն ու կատուն . . . . .	15 կոպ.
№ 7. Ճուտիկը-հրշեջ . . . . .	15 կոպ.
№ 8. Մայրիկից վրեժ . . . . .	15 կոպ.

Վաճառվում են հայ գրավաճառանոցներում:

Գումարով դնողներին զեղչ:

Հեղինակի հասցեն՝ Տիֆլիս, улица Жуковского, д. № 10.